

Մարդու ահեղ դիակներ.
 Դիակ կոյսի, դիակ աստղի եւ վարդի,
 Դիակը մեր Ազգին եւ մեր Աստղծոյն...
 Տե՛ս. Աճիւնի, արիւնի
 Կարմրածուփ լոյծ անապատ մ'է քու առջեւ,
 Որուն մէջէ ծանրաբեռնուած աւարով՝
 Ըսպանիչները գազան
 Կը հեռանան լիզելով
 Արիւնաքամ սուրերն՝ որ լերդ կը հոտին:

2

Կու գան ցիւները հեռաւոր լեռներէ,
 Եւ անգրդլներն հոտառու
 Կու գան իրենց ձագերուն կեր տանիլ մեզ,
 Յայ դիակի մ'աչքին կըտուց մըխելու
 Կ'հասնի Արծիւն այն հըսկայ
 Նօթի Արծիւն այն որ գուցէ օր մ'ամպէն
 Վեհաժողովը պիզմարքեան կը հըսկեր.
 Շուներն ուրախ պոչերով
 Բակերէ դուրս դիակէ դի կը յածին
 Եւ ծոյլ լեզուով մը կը լիզեն արիւններն
 Մերթ կասկածոտ կենալով
 Կիսամեռի մ'աչքերուն
 Յանկարծական բացումէն:
 ...Յետոյ կու գան Մայրերը ո՛ղջ մընացած
 Ու ողջ հարսերն ու բոլոր
 Մեր ողջ քոյրերը խելայեղ կանչերով:
 Նոճիներուն մէջէն խումբն հեզ կը վազէ,
 Արձակ կուրծքով ու բոպիկ
 Դեպ մեռելներն յօշոտուած՝